ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

2019 թվականի հունվարի 23 –ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 8 ա դասարանի ծնողական ժողովը: Ժողովին ներկա էին բոլոր ծնողներն ու աշակերտները:
Ժողովը վարում էր դասղեկ Նելլի Հովհաննիսյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1.

ա) Ուսման առաջադիմությունը 1-րդ կիսամյակում:

բ) 1 -ին կիսամյակի գնահատականների ամփոփում:

գ) Հաճախումների արդյունքները 1- ին կիսամյակի ընթացքում:

2.Ընթացիկ հարցեր /կարգապահություն,,հերթապահություն:

1.Լսեցին-Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ ելույթ ունեցավ դասղեկ Նելլի Հովհաննիսյանը: Նա ամփոփ ներկայացրեց դասարանի աշակերտների 1-ին կիսամյակի արդյունքները: Արդյունքում՝ դասարանում կա 9 հարվածային՝ Գալստյան Նարինե, Դավթյան Թամարա, Դավթյան Վարդիթեր, Խաչատրյան Անի, Խաչատրյան Հակոբ, Հարությունյան Կատերինա, Հովակիմյան Վահե, Հովհաննիսյան Մայրանուշ, Վարդանյան Անահիտ: Դասարանում կա նաև չառաջադիմող աշակերտ՝ Ղազարյան Նարեկը, որը անբավարա գնահատվել հայոց լեզվից: Դասղեկը հորդորեց, որ ծնողները մեծ ուշադրություն դարձնեն երեխաների հաճախելիությանը, անտեղի չբացակայեն, չուշանան դասերից:
Նշվեց նաև ,որ բացակայությունների թիվը 1- ին կիսամյակի ընթացքում կազմել է 429 ժամ, առաջադիմությ 96 % է , իսկ որակական ցուցանիշը՝ 60% :

Որոշեցին. Ծնողները որոշեցին, ապահովելով ծնող- դասղեկ- աշակերտ կապը, 2-րդ կիսամյակում բարձրացնել ուսման որակը և կարգապահությունը դնել բարձր հիմքերի վրա:

2.Լսեցին.- Դասղեկը խոսեց մի շարք աշակերտների կարգապահության մասին:Կարգապահական խնդիրներ ունեցող աշակերտներն են՝ Ղազարյան Նարեկ, Թանանյան Արտաշես, Գրիգորյան Լևոն, Մաթևոսյան Հովիկ:Դասղեկն առանձնագրույց ունեցավ հիշյալ աշակերտների ծնողների հետ՝ ծանոթացնելով խնդրին: Քննարկվեցին դպրոց բջջային հեռախոս չբերելու, որոշ դասաժամերին սովորողների պահվածքին վերաբերող հարցեր:

Ժողովի ընթացքում բարձրացվեց նաև Թանանյան Արտաշեսի ընտանեկան ծանր վիճակի քննարկման հարցը:

Որոշեցին. – Դասղեկի հորդորով աշակերտները հեռախոս կբերեն միայն անհրաժեշտության դեպքում, և այն կպահվի դասղեկի մոտ: Որոշեցին նաև հետևողական լինել հետ մնացող աշակերտների առաջադիմությունը բարձրացնելու հարցում: Դպրոց հաճախել համապատասխան հանդերձանքով և սանրվածքով:

Ծնողները և աշակերտները որոշեցին ամեն հարցում օգնել Թանանյան Արտաշեսին:

Դասղեկ ..... (Նելլի Հովհաննիսյան)
Քարտուղար ..... (Տաթևիկ Աբրահամյան)